

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/2

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ 02.03.2015 թ-ի թիվ Ն-02/03 գանգատը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.02.2015 թ-ի թիվ 5100984 ակտի դեմ:

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարի 16.02.2015 թ-ի թիվ 5100984 հանձնարարագրի հիման վրա 24.02.2015 թ-ի թիվ 5100984 ակտով ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում է արձանագրվել ընկերության Վարդանանց փողոցին հարող հասցեի մանրաձախ կետում:

«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ն խնդրում է 24.02.2015 թ-ի թիվ 5100984 ակտը համարել անվավեր և տուգանքը կիրառել միայն հարկային մարմնի կողմից արձանագրված Վարդանանց փողոցին հարող հասցեի տարածքում տեղակայված ՀԴՄ-ի նախորդ եռամսյակի իրացման շրջանառության 0.7%-ի չափով, այլ ոչ թե ընկերության ամբողջ մանրաձախ ցանցի նախորդ եռամսյակի իրացման շրջանառության 0.7%-ի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 6206763 հանձնարարագրի «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 09.02.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6206763 արձանագրությունը, որի համաձայն ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 23-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև նույն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերի պահանջները, որոնք առաջացնում են պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 16.02.2015 թ-ին հրապարակվել է թիվ 5100984 հանձնարարագիրը, որի համաձայն «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների

կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.02.2015 թ-ի թիվ 5100984 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 12.638.985 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետի համաձայն. «2. Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝

...

բ) հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության գրո ամբողջ յոթ տասնորդական տոկոսի չափով, բայց ոչ պակաս «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարի օբյեկտ չհամարվող հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ մեկ միլիոն դրամից, այլ գործունեության տեսակների մասով՝ երեք հարյուր հազար դրամից, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով»:

Իր հերթին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Քննարկվող դեպքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով նախատեսված տուգանքի չափը որոշվել է հիմք ընդունելով ոչ թե հսկիչ գնումն իրականացված վայրում տեղադրված ՀԴՄ-ի նախորդ եռամսյակի իրացման շրջանառությունը, այլ՝ ընկերության ամբողջ մանրածախ ցանցի նախորդ եռամսյակի իրացման շրջանառությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ակտով առաջադրված տուգանքը ենթակա է վերահաշվարկման, հիմք ընդունելով խախտումն արձանագրված վայրում, այն է՝ ք.Երևան, Վարդանանց փողոցում գտնվող ավտոբենզալցակայանում, տեղադրված ՀԴՄ-ի նախորդ եռամսյակի իրացման շրջանառությունը:

Տվյալ դեպքում ընկերության ք.Երևան, Վարդանանց փողոցում գտնվող ավտոբենզալցակայանում տեղադրված ՀԴՄ-ի 2014 թ-ի 4-րդ եռամսյակի իրացման

շրջանառությունը կազմել է 123.815.110 դրամ, հետևապես «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով նախատեսված տուգանքի չափը կկազմի 866.706 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.02.2015 թ-ի թիվ 5100984 ակտի 1-ին կտով առաջադրված տուգանքը՝ գումարով 12.638.985 դրամ, նվազեցնել 11.772.279 դրամով:

Հանձնաժողովի նախագահ՝

